

# Ճ Ա Շ Ա Կ

## ՌԱՍԿՐԷՆ ԳՊՐՈՒԹԵԱՆ

### Ա. Զ. Դ.

Ա.—Ձայս նուազ, որպէս է տեսանել, էջս ութ յաւելեալ ի վեչտասան էջս Հանդիսիս՝ եղաք, ըստ ըզձալոյ բանասիրաց բազմաց, հատակոտորս ինչ յընտիր մատենագրութեանց, ի Բուղանդայ և յՈսկերերանէ, որոց մտադիր ընթերցուածք նպատտ բաղում մատուցեն յուսումն բուն և հարազատ Հայ լեզուին Ոսկեղէն դարու:

Օրինակ զայս ունիմք դնել մերթ յաւելուածս ի Հանդիսի մերում յառաւել օգուտ ընթերցանելեաց. զի, ըստ որոց ասացաքն ի սկզբան անդ, իղձ այն է մեր՝ պիտանի ամենեւին և օգտակար առնել զսա մանաւանդ մանկուոյ դպրոցաց. և ոչ երբեք դանդաղեցուք ջան յանձին ունել վասն այսր դիտաւորութեան, ըստ ցանկալի քաջալերութեանն յորում ակն ունիմք վայելել յազդակցաց մերոց սիրելեաց:

Բ.—Քանզի կէտ եղեալ է մեր ածել ի հանդէս զհին Հայերէնն՝ անխառն ամենեւին յօտարոտեաց և յազգի ազգի փոփոխմանց դարուց յետնոց, հարկ ի վերայ կայ մեզ ծանուցանել աստէն, զի ամենայն հատածոց և դրոց կամ թղթոց որ յղիցին առ մեզ դալ ի լոյս ի Հանդիսի աստ՝ պարտ է ունել զպայման լեզուին որով եղաքն առաջի վարել ըստ մերում կարի. զի չմարթի մեզ այլազգ. դնալ և չառնել զանց զդիտաւորութեամբ մերով զոր քաջ իսկ ածաք ի յայտ:

ԽՆԱՄԱԿԱԼՔ



# Պ Ա Տ Մ Ա Կ Ա Ն

## ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

### Հ Ա Յ Լ Ե Ձ Ո Ւ Ի (1)

Ունանք յՆերոսրացի գիտնոց որ զառաջինն քննեցին զհայերէնն՝ չլինելով տեղեակ հնոյն, և ոչ իսկ գիտելով թերեւս թէ գոյր խտիր հին և արդի հայերենի, յարդի լեզուէն միայն դատելով կարգեցին զհայերէնն ի համարի դուրանեան լեզուաց, և կարի իմն դոյզն կարծիս կալան զհայերենէն, համարեալ զնա դուստր թուրքերենին, մինչեւ այլք, մանաւանդ ի գերմանացոց, ուսեալ զհին հայերէնն, գտին զրուն նորա որ է հնդկիկ-եւրոպականն. ուստի և Պոր, ի վերջնում տպագրութեան իւրոց համեմատեալ զարութեան, արար առանձինն նիւթ քննութեան զհին հայերէնն: Ուրոյն իմն և աւելի գտաւաւ առ ի քնին զմեր բարբառ հայերենագէտն Մ. Լաւէր, որ և ունի լեզուաբանական ոճով և տեղեկութեամբ յօրինեալ «Գրութիւն հին հայերէն լեզուի» (Grammatik der classischen armenischen Sprache), տպագրեալ 1860: Ի վերայ քննութեանց այսց գիտնոց յաւելեալ և զմերն՝ գտանեմք զի հայերէն լեզուն թուի ունել երբեք ժամանակ: Յառաջնում ժամանակին որ է յառաջագոյն քան զլատինութիւն՝ հայերէնն էր ի վաղուց ուրոյն լեզու, զատուցեալ յարեւմտեան մայր տոհմէն որ էր փոխադական կամ փոքրատախական, որում, որպէս ասացաք, ի մօտոց սղգակից թուին լեալ նաեւ յոյնն և լատին և գերմանալաւեան լեզուք. ունէր զիւր առանձին զարութիւն, մանաւանդ զայժմու զարտուղի ձեւսն, զանուանս թուոց, զփոխանակ անուանս: Եր առատ յօդաւոր ձայնիւք. բանիւք միայն սղբատ, ունէր ստկացն զընտանեկան և զսովորական անուանս, որպէս՝ հաւ, հայր, մայր, այր, կէն, Կայր, Զաւ, Վաւ, հոաւ, հոդ, օդ, յիւան, յիւն, յայն, յեան, որն, ալի, եմ, ուրեմ, բայեմ, քամ, քնամ,

(1) Տես զթիւ Բ.

գամ, Կամ, Դեմ. յընտանի շնչաւորաց մանաւանդ զանուանս անասնոց որ գրաստքն են, կամ յայլ ինչ պէտս կենաց վարին, որպէս՝ յէ, էշ, Են, շահ. միով բանիւ, այնպիսի անուանս որ իբր յաղգականութենէ, և ոչ իբրեւ փոխ առեալ, հասարակ են հայերենին և հնդիկ-եւրոպական լեզուաց արեւմտեան խմբին. այլ էր տակաւին անմասն ի վարչական կամ ի քաղաքային և ի տնտեսական անուանց, գէթ ի մեծագոյն մասնէ նոցա: Այսու լեզուաւ, իբր կէս քաղաքաւորեալ ժողովուրդ, դայ Հայ ցեղն ի տեղի վերջնոյ բնակութեան իւրոյ յԱյրարատ, և լինի սահմանակից արեւելեան հնդիկ-եւրոպականաց վերջնոյն, այն է՝ Արեաց: Ի հաղորդութենէ ընդ Արիս առնու լեզուն նոր իմն զօրութիւն, և սկսանի երկրորդ ժամանակն:

Ըստ ընդերանել ազգին ընկերական և քաղաքական կենաց Արեաց՝ գտանեն մուտ ի լեզուն կարեւորագոյն իրաց անուանք, որպէս վարչականքն, զինուորականք և կրօնականք: Այսպէս ծագին հրաման, հրապարակ, պայման, նահանգ, դեմք, պարգաւ, դաշն, աշակերտ, վարդապետ, դաս, վճիռ, պարբերա՞, զօր, փոխօր, սպայ, ծածկար, ծակար, պարխալ, լեւշնամբ, աւեր, զէն, ասպար, զրահ, հրեշտակ, դեմ, Գէշ, Բաշխ, դժոխք, և այլ անթիւք, որ ոչ եւս յազգականութենէ են և յօրինեալք, այլ պատրաստք և եկամուտք, զորս գիտաց ընտանեցուցանել ինքեան ազգն ըստ տանելոյ լեզուին: Այս հաղորդութիւն Հայոց ընդ Արիս, որոյ սկիզբն նոյնպէս յառաջագոյն է քան զսլատմութիւն, գիտեմք ի պատմութենէ թէ տեւեաց բաւեաց ոչ միայն առ Մարօք և ըստ նոցանէ առ առաջին Աքեմենեամբք, առ Նիւրոսիւ և առ առաջին յաջորդօք նորա, այլ և մանաւանդ յետ Դարեհի Վշտատպեայ, մինչ քաղաքական կեանք Հայոց ետ տեղի երկրագործական և ձեռագործական հանդարտ կենաց:

Չոր ասացաքս առեալ ի բնութենէ լեզուին՝ հաստատի եւս ի հանդամանաց երկրին Հայոց, և յակնարկութենէ հնագոյն պատմագրաց Յունաց: Ն'ւ երկիրն և՛ աղղ Հայոց, անդէն իսկ ի ժամանակի Արարատեան թագաւորութեան, գիրկընդխառն իմն էին ընդ Մարաց: Հարաւային արեւել-

եան մասն Հայոց առ Արշակունեօք իսկ կոչի « երկիր Մարաց » առ Բուղանդայ : Յառաջագոյն իսկ քան զնա ի հին երգս վիպասանաց մերոց դաշտն Շարուրայ որ կայր առ երի Մասեաց՝ կոչի « Մարք », որպէս և քաղաքն զոր շինեաց անդ Արտաւադդ, որդի Արտաշիսի, անուանեալ կոչի « Մարակերտ » : Այլ և Արտաւադդայ ոչ գտեալ քաջի որդւոյն Արտաշիսի տեղի ապարանից ի հիմնանալն Արտաշատու, նա անց դնաց և շինեաց ի մէջ Մարաց զՄարակերտ որ է ի դաշտին Շարուրայ » (Երգ վիպ. առ Խոր. Ա. Լ.) : Ձէր դոյզն քաղաքային և ընկերական աղերս երկուց աղգաց, Մարացն և Հայոց, որպէս՝ դաշնակցութիւն, տուրեւաւրք, խնամութիւն, այլովքն հանդերձ :

Զդաշնակցութենէ թագաւորին Հայոց ընդ Մարաց, զարծաթոյն և զգօրութեն զորս նպատտ եղեն Հայք ընդ հրամանատարութեամբ Տիգրանայ ուրումն արքայորդւոյ ի պատերազմին Կիւրոսի ընդդէմ Բաբելոնի, պատմէ Քսենոփոն ի գիրսն որ կոչի « Խրատք Կիւրոսի » : Եւս իմն աւելի վաւերական է Նրեմիա որ նիւլակակիցս դնէ զՀայս Մարաց ի նմին պատերազմի . « Կոչեցէք ի վերայ նորա (Բաբելոնի) զթագաւորան Մարաց . . . հրաւիրեցէք զթագաւորութիւնս Արարատայ, Մենւոյ և Ասքանազայ, » ըստ եբրայական բնագրին . ըստ Եօթանասնից, « Հրաման տուք Արարատեան թագաւորութեանն և Ասքանազեան զնդին : » Միւս եւս հին վիպութիւն, այն է արձանագիրն Դարեհի, պատմէ հնգեկին իմն ճակատս Պարսից ընդ Հայոց : Զմատագոյն աղերս դրացութեանն Հայոց ընդ Մարս ցուցանէ Ստրաբոն, պատմիչ և երկրագիր հին, ժամանակակից Տիգրանայ և Արտաւադդայ : « Բազումք ի սովորութեանց, » ասէ, « որ երեւին ի մէջ Մարաց՝ գտանին և ի մէջ Հայոց ի սլաոմասս, որպէս յայտ է, նմանութեան երկուցն սլաւարհաց : Կարծի սակայն թէ Մարք են որ եղեն անաջին դաստիարակք Հայոց, որպէս եղենն Պարսից : » Եւ այլուր ասէ, թէ նոյն կրօնք են Մարաց և Հայոց . այլ Հայք սլաշտեն, ասէ, մանաւանդ զԱնահիտ, « որում ունին կանգնեալ մեհեանս ի տեղիս տեղիս, առաւել իմն յՆիկեդեաց : » Իսկ զխնամութենէ



Հայոց ասէ նոյն սյր թէ տեւէր առ իւրովք իսկ ժամանակօք ընդ թագաւորս Ատրպատականի որ էր մասն երկրին Մարաց : « Ատրպատէս », ասէ , « ստորապ Ատրպատականն անուանեալ Մարաց , չէտ թոյլ երկրին այնմիկ անկանել ընդ Մակեդոնացւովք . և վասն այսպիսի ծառայութեան տուաւ նմա թագաւորել աշխարհին , և հարստութիւն նորա տեւեաց բաւեաց մինչեւ առ մեօք , մանաւանդ վասն բարենշան խնամութեանն զոր կալան յաջորդք նորա՝ արարեալ կանայս զթագաւորազն օրիորդս Հայոց : »

Գործօն հանճար Հայ ազգին , գտեալ այսպէս նպաստ բաղում ի քաղաքային և յընկերական կարգաց Արեաց , յարուեստից նոցա , ի գիտութեանց և ի կրօնից որ այնց ժամանակաց փիլիսոփայութիւնն էր , մթերեալ ամբաւ մեծութիւն , և ճուլեալ ի մի զօտարն և զընտանին , թուի վաղ իսկ հասուցեալ զլեզուն յայն չափ , յոր հասուցին բումանական ազգք զիւրեանցն , յորժամ սկիզբն արարին մատենագրել : Արդէն վիպասանք , որոց գլխաւոր տեղին թուի լեալ Գողթն , իբրեւ զբումանական երգիչս Միջին դարուց յարեւմտեան Նւրուսա , նա թերեւս իբրեւ զԻրուիդս Կեղտաց , գրով թէ անգիր՝ չէ յայտ , չիջէին երգել բամբուռս զիւրեանց երգս միմեջոց , որոց Բուզանդ (Գ. ԺԳ.) և Խորենացին (Բ. ԽԹ. Ծ.) տան զվիպասանութիւնն անուն , զի նիւթնոցա , որպէս երեւի , էին մանաւանդ գործք թագաւորաց (Խոր. Բ. ԽԹ.) : Նթէ սլարտ է հաւատալ Խորենացւոյն , զՏիգրանայ զոր դնէ առ առաջին Արարատեան թագաւորութեամբ , կային այսպիսի երգք (Խոր. Ա. ԻԳ.) : Վարդգեսի գեղեցիկ երգն (Խոր. Բ. ԿԵ.) (եթէ , որպէս ասէ Խորենացին , Վարդգէսս այս էր արդարեւ քեռայր Նրուանդայ ուրումն Արարատեան թագաւորի) սլարտի լինել յառաջագոյն քան զժամանակն Արշակունեաց :

Առ Արշակունեօք է երրորդ ժամանակն , յորում ի ներքուստ զարգանալ լեզուին , որ արարեալ էր յառաջագիմուսութիւն մեծ յերկրորդումն , մատուցաւ յառաջ նովին ճանապարհաւ , և թերեւս եւս իմն աւելի մեծ զօրութեամբ , մինչեւ կարել յայտնել ոչ միայն սլարգ ուզիլ զամենայն ազգի

ազգի տեսիլս մտաց, զբնականան, զմոտաւորս և զբարոյա-  
կանս, այլ և զանցնիւր տեսլեան զգոյնս և զերանգս մանր  
զանազանութեամբ: Հայերէնն զխտէր ոչ միայն լեան, այլ  
և, բլաւ, սար, արեւան, գահ, վախ, հաւասանք. ոչ միայն  
փեր, այլ և ալն, աղբիւր, հեղեղատ, ժորակ, արտա, հեղեղ, աղի.  
ոչ միայն հովիտ, այլ և յոր, կէրճ, նեղաց, Ժմակ, Էմակ, Ժոր-  
Ժոր, Խոխոս. ոչ միայն դաշտ, այլ և արարակ, մարգ, մարմանք,  
աւարակ, արտ, անդ. զխտէր ոչ միայն զան, այլ և մալախ,  
ճոպան, պարան, արան, արասան. ոչ միայն կացն, այլ և ար-  
ար, սակ, վաղր, արագ. ոչ միայն մոբճ, այլ և արան, կան.  
զխտէր զաղերս մերձաւորութեան ոչ միայն մոտաղոյն զար-  
մին ազգականութեան, որպէս հայր, մայր, եղբայր, քոյր, այր,  
կնն, որդի, ասոր, դասոր, այլ և երկրորդին և աւելի հե-  
ռաւորին, որպէս հաւ, հանի, քոռն, փեսայ, հարս, նոս, ար-  
նէր, զոտն, ակեանք, ակեարայր, յարայ, մարտ, արջա, փեր,  
փերի, փերիւ, արագ, արա, ներ. զխտէր ոչ միայն աւակ, այլ  
և կծիկ, ծառ, փփաղ, հոճիմ, կոյր, ընդաւայր, զընդաւայր. ոչ  
միայն հայր, այլ և ամբարտաւան, գորտ, սեւ, ամբարտաւան,  
խորտ, և այլափոխ բանիւ՝ Բարձրայն, Բարձրալի, Բեթման,  
Բեթման: Այսպէս չգոյր գրեթէ տեսիլ որ չունէր հայերէն  
յայտարար նշանս իւրոց պէսպէս գունոց և աստիճանաց, և  
այս քաջ ի բաց ի վաղուց: Նշնիկ, յետ ասելոյ թէ հայերէն  
ոգի, հողճ և այս քաջ ի վաղուց: «Ի մեր լեզու այս  
չար սանք, որպէս ի խորանաց հարցն մերոց առաջնոց ըստ  
սովորութեան ի մեզ կարգելոյ, այլ զխտեմք եթէ այսն հողմ  
է, և հողմն՝ ոգի:» Որպէս այս, նոյնպէս չիք տարակոյտ թէ  
այլն ամենայն խտութիւնք անուանոց, առ Նշնիկաւ իսկ,  
գայլն անգուտ ի վերուտ ի նախնեաց:

Ա. Մ. Գ.

(Մատոյցի յատուց)



# Գ Ի Տ Ն Ա Կ Ա Ն

## ՍԼԱՅԵԱԼ ԱՍՏԵՂՔ

Անձրեւն հրեղէն որ եղեւ ի 27. նոյեմբերի ամին 1885, յառաջնում պտհու գիշերոյ, որպէս պատմեն հաւաստեալ տականտեսք հաղարաւորք, պատճառս ետ ամենեցուն միտ դնել միւսանգամ բնութեան սլացեալ աստեղաց:

Այլ զարմացեալ ընդ տեսին երկնաւոր հարցանէր զընկեր իւր՝ ԶԻ՞նչ իցէ, բա՛բէ, երեւոյթն սքանչելի. և ոչ ստալաւ այնոքիկ էին զորս կալաւ երկիւղ յեղախոտութեան իւրիք մեծի, այն է՝ երկիւղ կատարածի աշխարհիս կամ սասանութեանց զետնոյ կամ եւրոպեան պատերազմի: Ապա չէինչ անդէպ տալ տատ կարճառօտ զմեկնութիւն զարմանալի երեւութին, որ յինքն ձդէր ընդ երկար զուշ և զուրուշ հասարակաց:

Ի գիշերի, յորժամ ջինջ յամալոց իցէ երկին, յաճախ է տեսանել աստղ մի որ թուի իմն հատանել ի կամարէն երկնից, սուրալ սրանալ և անդէն վազվազակի լինել աներեւոյթ՝ թողեալ հետս լուսաւորս ի մթի անդ գիշերոյ: Ըստ միջին հաշուոյ մարթ է ի միւում ժամու տեսանել աստեղս հինգ յաստեղաց անտի: Մերթ երեւին նոքա պոյծառացեալք յոյժ, և անուանին «լացեալ աստեղք». կոչին և «դադալէն», յորժամ դէպ տացէ նոցա անկանել ի վերայ Նրկրի: Յայլ և այլ ժամանակս տարւոյ բազումք յոյժ տեսանին ի նոցանէ որում զննիցէն, և ծանօթ իսկ են սլացեալ աստեղացն խումբք որ երեւին յ8. կամ յ12. օգոստոսի և յ12. կամ ի 14. նոյեմբերի:

Սկիզբն և բնութիւն սլացեալ աստեղացդ մնային անծանօթ ընդ բազում ժամանակս. կարծէին զոտա լոկ երեւոյթս ինչ յերկրաւոր երեւութից, և այս կարծիք էին ի համարի օրինաց ընդ ԺԲ. դարն ողջոյն: Մարմին այլակերպ զնէին զաստղն որ սլանայր, և այլազգ՝ զօգտաբարն որ յերկիր անկանէր, այսինքն ամենեւին զսա ի միմեանց: Ոչ ոք, ի

գիտնոց իսկ թէպէտ էր , կամէր ունել հաւատս՝ եթէ յերկնից քարինը թօթափիցին , և զայնպիսի ասացածս զբնութենէ սլացեալ աստեղաց կամ օդաքարանց՝ առասպելս կարկատեալս համարէին գիտունք :

Այլ և զկարի զանհաւանս ի հակառակորդաց անտի գիտնոց բաւական լինէր ածել ի հաւան այր ոմն գիտուն , որ կոչէր Պիօդ , արկեալ զիրան ի քնին ըստ սլաչտամանն որ նմա յանձն էր : Ապա բազումք ի գիտնոց զմտաւ ածէին՝ եթէ մի արդեօք զոր օդաքարինսն կոչեն , վասն ի բարձուէն անկանելոյ նոցա , լիցին լոկ քարինը ձգեալք ի Նուսնոյ : Յետոյ առ սակաւ սակաւ գային ի կարծիս անդր՝ եթէ աստեղք սլացեալք և օդաքարինք որ յերկիր անկանիցին՝ անդուստ ի վերուստ յերկնից առնուն սկիզբն . զի յԱրեգականայն դուրսեան մերում գոն անթիւ մարմինք փոքրկունք , զեղեալք սփռեալք ընդ անբաւութիւն միջոցին , որոց հանդիպի մերթ Նրկիր ի չրջել իւրում շուրջ զԱրեգակամբ . և վասն անհնարին արագութեանն որով վարին մարմինքն յընթանալ իւրեանց , յորժամ . դիպիցին համատարած օդոյս որ շուրջ զՆրկրաւ , ազդեցութիւն չլիման նոցա և ընդդիմակաց բնութիւն օդոյ տան նոցա վառել այրել և չողացուցանել յինքեանս զշողն փայլածուն զոր է տեսանել յամենայն ի սլացեալ աստեղս : Որ կարի փոքունքն են ի մարմնոց անտի՝ այրին ողջ բովանդակ , և փխրեալ քրքրեալ ի ջերմութենէ լուծանին ի փոշի և յերկնից ի վայր իջանեն : Իսկ որ մեծագոյնքն են ի նոցանէ՝ այրին երեսօք չափ եւեթ , այնու զի երկայնութիւն չաւղի նոցա չտեւէ քան զրոպէս ինչ . վասն որոյ ամենայն օդաքարանց որ թօթափիցին ի վերայ երկրի՝ հալեալ գտանին արտաքին երեսքն ողջոյն , ուր ներքին մասն նոցա ցուցանէ յինքեան զկազմութիւն ական վանի :

Ուստի՞ հասանիցեն առ մեզ մարմինքդ . այդոքիկ փոքրուկունք . զի՞նչ սկիզբն իցէ նոցա , և զի՞նչ ծնունդն :

Սքիաբարեւի , անուանի աստեղադէտ իտալացի , կալաւ զփառս լուծանելոյ զխնդիրդ բազմախառն , զորոյ երոյց զմեկնութիւնն և ետ առնուլ ի միտ դիւրագոյն իմն օրինակաւ :



Ի սահմանեալ աւուրս տարւոյ թիւ սլացեալ աստեղաց բազմանայ սաստիկ յոյժ, մինչեւ աչօք իսկ բայօք տեսանել մարդոյ ճմարիտ անձրեւ սլացեալ աստեղաց . յայնժամ երեք, չորք մինչեւ հինգ ի նոցանէ անկանին ի վայր ի միասին, և չլինի մարթ թուել զնոսա մի ըստ միովէ :

Յամին 1872, յ17. նոյեմբերի, յորժամ եղեւ անձրեւ սլացեալ աստեղաց, թիւ նոցա, յ7. ժամէ երեկոյին մինչեւ ց2. ժամն առաւօտին, էր առաւել քան զհարիւր երեսուն հազար :

Ի չրջանս անդ ժամանակաց որ դարձ առնեն ըստ ճշգրիտ հաշուոյ ուսողութեան՝ իւրաքանչիւր ումեք մարթ է միա դնել, զի ամենայն սլացեալ աստեղք թէսլէտ յակն անկանին մեղ թէ ընդ բնաւ սուրայցեն, թուի իմն ի նմին և ի միովէ կիտէ առնուլ նոցա սկիզբն կատարելոյ զընթացս իւրեանց, այն է՝ ձգելոյ զլուսաւոր հետս իւրեանց ի յետս կոյս ի կէտ անդր ուստի մեկնիցին, և ամենայն հետոյ դալ հատանել զմիմեանս ի նմին տեղեով, որ կոչի կէտ հաւաքայեան : Աստի է իմանալ զի գտանիմք առաջի միոյ եւեթ խմբի . ամենայն սլացեալ աստեղք չրջին ընդ նոյն և մի շաւիղ, և երեք ուրեք դէսլ վինի Նրիլի ի թաւալման իւրում զՍրեգակամբ գալ հատանել զշաւիղ նոցա ընդ որ գնան :

Կարգաւորութիւն երեւութիցս առնէ յայտ ըստ բաւականին՝ եթէ մարմինքն այնոքիկ փոքունք, զօրէն միւլար աստեղց և գիսաւորաց, չրջին շուրջ զՍրեգակամբ : Արդ կարի ի դէսլ է նկատել՝ զի խնդիր մեր է վասն կոտորոց մեծի իրիք մարմնոյ . և այն իսկ ես ճանաչել զարժանաւորն վաստակ Սքիաբարեկէայ՝ ցուցանել զփորձ իրացդ մաթեմատիկապէս : Ի ձեռն տեսական վարդապետութեանն որ եգիտ զհաստատութիւն ճշդիւ գտակաւ յառնէ անտի գիտնոյ՝ մարթ է հաշուել զսկզբնական տարերս զոր ունիցի շաւիղ խմբի միոյ սլացեալ աստեղաց, գիտելով զդիր կիտի ճառագայթման նոցա : Սքիաբարեկի պատշաճեալ զվարդապետութիւն իւր ի խումբան երկուս որ գտն ի տես յամենանն օգոստոսի և ի նոյեմբերի՝ եցոյց հաւաստեաւ զի խումբն առաջին գնաց ընդ շաւիղն ընդ որ գնայր աստղն գիսաւոր

որ երեւեցաւ յամին 1862, և խումբն երկրորդ չքի ընդ ծիրն ընդ որ չքէր գիտաւորն զոր եգիտ Թէմբլ յամին 1866 : Ապա յայտ խի է, ըստ վարդապետութեանն Աքիաբարել-լեայ, զի սլացեալ աստեղը գնան զհետ միոյ ի գիտաւորաց ընդ նոյն և մի շաւիղ :

Նրկակաւորը մեծամեծք են մարմնոց գիտաւորաց, բայց սակաւ է խտութիւնն նոցա . մեծի հաւանութեան է՝ զի աստեղը գիտաւորը իցեն արտաքոյ Արեգակնային դրութեան մերոյ, այլ քարչէ գնոսս սաստիկ ձգումն Արեգական : Վասն անբաւ տարածութեան միջոցին ընդ որ սիւնին մասունքը դիտաւորաց, անգոր է յոյժ զօրութիւնն ձգման մասանցն փոքրըկանց ի կեդրոն անգոր ծանրութեան : Ապա, եթէ գէպ չար տացէ գիտաւոր աստեղ անցանել մատ առ ծանու իւրը մարմնով, զոր օրինակ առ մոլար աստեղը, քարչեսցէ սա զմերձաւոր մասունն գիտաւորին և լիցի արդեւ իմն ընթացից նորա : Մասունքն զոր ձգիցէ աստղն մոլար՝ յեանեսցին ի բույական մասանց գիտաւորին, և բեկորը մասանցն քարչելոց սիւնեսցին ընդ միջոց մեծատարած յոյժ . այլ ոչ դադարեսցեն ի գնալոյ զհետ գիտաւորին ընդ նոյն և մի շաւիղ : Ի յաճախել աղբեցութեանն զոր հասանիցէ կրել գիտաւորին յօտար մարմնոց անտի՝ մասունք նորա ցրուեսցին ընդ ամենայն երկայնութիւն շաւիղի նորա, մինչև թերեւս աներեւոյթ լինել գիտաւորին և տալ սեղի սլացեալ աստեղացն խմբից : Ապա, յանցանել Նրկրի ընդ շաւիղն ընդ այն, է մեղ ակն ունել յաճախելոյ սլացեալ աստեղաց, որպէս յաճախենն երկիցս ի տարւոյ. երեւոյթ նոյնալիսի էր և զոր արկինն ի գնին ի 27. նոյեմբերի անցելոյ ամին :

Պատշաճել զԱքիաբարելլեայ վարդապետութիւնն խմբին այնմիկ որ երեւէր ի 27. նոյեմբերի վերջնոյ՝ ցուցանէ անդէն զի գնայ խումբն այն զհետ գիտաւորին Պիալայ, և այս ինչ ածէ զմեզ զբաղել զստամութեամբ սորին :

Գիտաւորս այս յակն անկաւ զառաջինն յամին 1772 . զայր տալա ի յայտ լինել նմա ի չքմանաւոր գիտաւորաց, և չքել զԱրեգակամբ յընթացս վեցից ամաց և ամսոց իրրեւութից : Յամին 1846, յորժամ գայր երեւէր գիտաւորն, գէպ

սայր նմա յանկարծ բաժանել յերկուս մասուհա , որոյ ցայն վայր մի էր գուհնդն միջին : Մասունքն երկոքին հեռացեալ ի միմեանց գնային ի բացեայ ընդ շաւիղ իւրեանց՝ մին գհետ միւսոյն : Շաւիղ գիսաւորիս այսորիկ մօտ առ մօտ անցանէ առ շաւղաւ Երկրի , ընդ 72. աստիճանն երկայնութեան . հասանէ եւս գշաւիղ Էնքեայ գիսաւորին : Բնդուհայն խընդ-րէին զնա յամին 1852 , յորում երեւեւոյն էր ըստ հաշուոյն . նոյնպէս ապա յամին 1859 , եւս և յամին 1866 և ի 1872 , որոնէին զնա ի զմէր մեծամեծ հեռագէտք ի խորս երկնից . թուէր իմն աստեղադիտոց կորուսանել զնա ի սպառ : Այլ յամին 1872 ի 17. նոյեմբերի , երեւէր յերկինս երեւոյթ մի նորանշանս սքանչելի . ի ժամուս յորում անցեալ գնայր Երկիր մեր զրեթէ ընդ շաւիղ գիսաւորին կորուսեւ , և ահա անձ-րեւ սլացեալ աստեղաց , իբրեւ զայն որ երեւեցաւ ի 27. նո-յեմբերի , լինէր յերկինս զգիշերն ողջոյն , և զարմանային աստեղագէտք զարմացումս մեծ : Աստեղագէտն Քինքերֆին իսկ և իսկ մեկնէր զերեւոյթն՝ համարեալ զնա յազդեցութե-նէ անտի գիսաւորին կորուսեւ , և ազդ հեռագրուս տունէր ի Մատրաս առ աստեղագէտն Բսկոն՝ որոնել զգիսաւորն ի մօտակայս 0 աստեղն Զիացլու :

Եւ դտանէր արդարեւ ի կիտի անդ զոր նշանակեայ Քինքերֆին՝ աստղ մի գիսաւոր . այլ բախտ չար չեաւ արկա-նել զնա ի զնին առաւել քան երկիցս : Պիաւլայ՝ արդեօք գի-սաւորն էր , կամ ա՞յլ իմն ի գիսաւորաց էր նա . — սլացեալ աստեղացն խումբ որ երեւեցաւ ի վերջնում ամի՝ սացէ թե-րեւս սլատասխանի հարցուածոյդ :

Արդէս զիարդ և իցէ , անձրեւն լուսեղէն գեղեցիկ զոր վայելեցաք ի 27. նոյեմբերի՝ հաւաստեաւ իմն ածէ ի յայտ՝ զի եհաս մեզ լինել ականատեսս քայքայման գիսաւորին Պիա-ւայ , ըստ օրինակին զոր վերագոյնն կացուցաք յանդիման : Բաժանեւոյ գիսաւորին յերկուս յամին 1846՝ սլատճառս ետ սլացեալ աստեղացն խումբ որ ի նոյեմբերի անդ , և կատա-րեցաւ ի սպառ քայքայումս գիսաւորին յանցանել նորա ընդ խումբն ընդ այն յամին 1865 :

Տեւել չրճանի սլացեալ աստեղացն սլարուց զոր արկաք

ի քնին՝ է հաւասար բնապէս չըջանի գիտաւորին : Ապա Մարթէր գիտեւ կանխաւ զկրկնել երեւութին , և չըջաբերական թուղթ դիտանոցին Տիւնեհթի հրաւիրէր զատեղագէտս դնել միտ այսրէն դարձի նորա , որ լինելոց էր ըստ հաշուոյ դիտանոցին զհասարակ գիշերաւ : Դիպէր երեւոյթն զՅ<sup>1</sup>2 ժամաւ երեկոյին . խուն ինչ լինէր ապա վրէպ հաշուոյն :

Արդ յետ այսորիկ , ի բոլորել լուրաքանչլուր չըջանի նորա , մարթ լիցի մեզ լինել ակննատես մեծաշուք տեպեանն զոր նկարէր երկին ի 27. նոյեմբերի վերջնոյ :

Ա. ՔԱՄՄԵՐՄԱՆ

Յ. Գ.

## ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

### ՀԱՄԱՆՈՒԱՆՔ

Համանուն կոչին երկու կամ աւելի անուանք որ ոչ զմի և զնոյն ինչ , այլ զպէսպէս հանգամանս միոյ իրիք յայտ առնեն . ցուցանեն որպէս թէ զմի և զնոյն գուռոյ , զոր օրինակ կարմրոյ կամ կանաչի , զազգի ազգի երանգս որ հազիւ իմն ընտրին ի միմեանց : Չիցէ ամենեւին առանց օգտի ի խեղամոութիւն լեզուին երբեք երբեք դնել ի Հանդիսիս հայերէն համանուանս , ցուցանելով զիտիր նոցա ի միմեանց մեկնութեամբք և օրինակօք նախնեաց : Այսու ոչ միայն գոյցեն յայտ հայերէն անուանք որ ծածկեալ իմն են յանկիւնս գրոց և ի մուացօնս արկեալ , այլ և ցուցել թէ չէ յաղքատաց ինչ և ի կարօտ լեզուաց Հայերէնն . երեւեսցի միանգամայն սուրն և խոր հանճար նախնի Հայոցն , որ ոչ միայն արտաքին երեւելի հանգամանաց իրաց լինէր մտադիր , այլ և ներքնոցն և չերեւելեաց , և տայր նոցա իւրութեանչիւր բանիւ և բարբառով մարմին և կերպարանս :



Առցուք զայս նուազ զաւանանուն , որոյ համանունք են ի մերում լեզուի ժլադ , Էթէի , Խիթի , Տիթի և Կիթի :

Ազահն նշանակէ յաճախ զայն որ ունել ունի ինչս առաւել քան զբաւականն , չկամի սակայն հանել յիւրմէ . « Մի ազահեսցեն աչք ձեր ի կահ ձեր » , այսինքն՝ մի խնայեացեն . « Ասիցեն թէ ազահեաց յարծաթն » , այսինքն՝ խնայեաց :

Ազահն ոչ միայն խնայէ յիւրն , այլ և յայլոց ինչս դնէ ակն . « Միթէ ազահեաց ինչ զձեր Տիտոս » , այսինքն՝ էա՞ն ինչ ի ձէնջ զօշաքաղութեամբ որպէս զայլ վարդապետս :

Ազահն ըստ առաջին մտաց , իբրեւ յանձարիս խնայող , կոչի ի մեզ ռիթի , ճիւղիմ և կցիր : Այլ գոն և ի սոսա խտիրք : Ռիթի ազահէ ի տալ . տայ բազում դժուարութեամբ , որպէս թէ կապեալ իցէ յազահութեանն . ուստի ասէ Բուդանդ զՅովհանայ ումեմնէ անարժան եպիսկոպոսէ՝ թէ « Էր կապեալ ի ռիթութեան և յազահութեան զամենայն աւուրս կենաց իւրոց » : Ի Մակարայեցիս (Բ. Դ. 50) ասի զԷլիսանաց տիւրացւոց՝ թէ « Արձակեցին և զՄենեղաւոս վասն ռիթութեան և ազահութեան » . զի Մենեղաւոս ետ արծաթ բազում թաղաւորին : Աստ , որպէս յայտնի է , ռիթութիւն է փոխանակ ժլատութեան : Թարգմանիչն Մատթէի մեկնութեան Ոսկերերանի երկիցս « ռիթի վաճառականութիւն » կոչէ անխնայ աշխատ առնել զմէակս , ժողովել բազում արդիւնս և մեծանալ նոցա սատարութեամբ , որպէս առնէին ոմանք ի մեծատանց որ էին մեծամեծ կալուածոց տեարք , և տալ փոխարէն կարի իմն դոյլն վարձս :

Ճիւղիմ է որ ազահէ ի կարի մանունս . չտայ զանարգն ընդ պատուականին , չունի միտս ազնուականս , սիրէ կալ մանաւանդ դժուծ առ ազահութեան քան առատանալ , զոր համարի շոյալութիւն . փոխանակ մեծաց երախտեաց անխայէ տալ զփոքրն և զչնչին , ուստի և ոչ ազահ միայն է , այլ և տմարդի : Ճիւղիմն վատթարագոյն է քան զռիթի : Սա զայլս միայն զրկէ , նա՛ և՛ զայլս և՛ զանձն իսկ գլխովին : Ռիթին արժանի է մեղադրութեան , ճիւղիմն հանդերձ մեղադրութեամբն՝ արհամարհանաց և զարշանաց եւս : Ռիթին ի գործոյն յայտ առնէ զազահութիւնն , ճիւղիմն՝ և՛ ի գործոյն և՛

ի հանդերձէն և՛ ի կերպարանայն : Թարգմանիչն Ոսկերերանի ուրեք ուրեք յարէ ի նոյն և զկցիրն բան , որ թուի յայտ առնել զմի և զնոյն միտս : Ի մեկնութեան Մատթէի , էջ 659 , ճշմամբ կոչին այնպիսիք որ ի մարմնաւոր բարեայ որ դոյզն իմն են առ հոգեւորին զորս առատապէս վայելեն յԱստուծոյ՝ ագահեն տալ աղքատաց առ սէր նորա . « Մարդկան փոխ տալ յանխնայ առատանաս . յորժամ զքո տէրն իցէ կերակրել , աստ ճշմամբ և տմարդի գտանիս : » Ի ճառին ԻԴ. էջ 706 , 708 , 709 , Ոսկերեան յետ սրբառաւելոյ զաւելորդ սրճուճանս հանդերձից և կօշկաց , և խրատելոյ սովորականօքն շատանալ , ասէ . « Դիտեմ թէ բազմաց ճշմամբ կարծիմ զայս ամենայն մանր քննելով . սակայն ես ինչ ոչ խորշեցայ : » Ապա խօսելով զերկտասարդաց որ փոյթ մեծ ունէին զգարուց կօշկաց , ասէ . « Որ յայնպիսի իրս հարեալ իցէ , և՛ ճշմամբ լինի և՛ անագորոյն » . և սակաւ մի զկնի . « Այնպիսիքն ճշմամբ և կցիրք առնին և ընչասէրք . զի որ յայն մուկալ և ճեպեալ է՝ սովորեայի և ի հանդերձս , և բազում ծախուց կարօտանայ : Եթէ հայրն եւս առատ իցէ , եւս քան զեւս գերի վարեալ երթայ . և եթէ ճշմամբ և կցիր ոք իցէ , հարկ է ոսկի գազանալ և մթերել յայնպիսի ծախս . . . և զի ճշմամբ և ընչասէր լինի այնպիսին , յայտ յիւրացն իսկ է » :

Ըստ երկրորդ մտաց , այն է իբրեւ ցանկացող այլոց ընչից , ագահն կոչի առ մեզ ժլատ և կծծի : Ժլատ այն է որ ոչ միայն աչս արձակէ յայլոց ինչս , այլ և փութայ առնուլ , ժլատն՝ յայտնի իսկ յափշտակութեամբ , կծծին՝ գաղտագողի : Այսպէս առ Բուղանդայ Մեծն Ներսէս լուեալ զբանս մարդպետին որ սալառնայր տալ առնուլ յարքունիս զկալուածս եկեղեցւոյն որ ի Տարօն , ասէր . « Տէրն մեր պատուիրեայ մի ամենեւին յայլոց ինչ ակն դնել կամ ցանկալ . իսկ որք ժլատեալք ի նորա նուէրսն բերեն աչս՝ մի հասցեն առ այն : » Եւ Նզնիկ ասէ զհինէն թէ « Նկեալ ժլատուութեամբ կոտորէ զաշխարհ , և մերկանայ յընչից և յստացուածոց : » Ժլատանալ կամ ժլատել այսու մոռք ունիլք ստիպ առ Նփրեմայ , Մեկն. Թարգ. « Աւարել քարոզելին նո-

ցա և ոչ մարտնչել . ժլատել , և ոչ պատրաստել » . « Այր քան զընկեր իւր ժլատեսցի յաւար անդր » . « Ոչ յաւարել կամ ժլատել ինչ (եկի) , որպէս և դատարկ ձեռքս խմ վկայեն » :

ժլատել ասի և զհագածելոյ , այն է յանյազս իմն ուտելոյ . որպէս և ռամիկն մեր սովոր է ասել . « Ահագ (ազակ) ուտել » : Այսպէս ի գեղեցիկ խրատուն Սիրաքայ առ որկորեայս երկիցս գտանեմք զնոյն բան . « Ի սեղան ի մեծ նստար , մի բանար ի նմա զկոկորդ քո . կեր որպէս մարդ որ ինչ կայն առաջի քո , և մի ծանծաքեր , դուցէ ատիցիս : Դադարեա նախ վասն խրատու , և մի ժլատիր . և եթէ ի մէջ բազմաց նստար , յառաջ քան զնոսա մի ձգեր զձեռն քո : Որպէս զի բաւական է մարդոյ խրատելոյ սակուն , և յանկողնի իւրում ոչ հեծէ : Քուն առողջութեան ի վերայ չափաւոր աղւոյ . յարեաւ այգուց , և անձն նորա ընդ նմա : Յուք տընութեան և մաղձայուլի և խիթք որովայնի ընդ առն ժլատի : Եւ եթէ բռնադատեցար ի կերակուրս , արի կիսով և հանգիցես » (Սիր. 1, 7) : Ի սոյն միտս արկանէ ի կիր և թարգմանիչն Նիրեմայ . « Շուայտացաւ ժողովուրդն յաւար անդր . այսինքն , զի ժլատացան և տարան զխաչինսն և զանդեայս , և կերան հանդերձ արեամբն » :

Կծծի կոչի այն որ սովոր իմն է առ ագահութեան խորել յարծաթոյ կամ յայլոց իրաց որ նմա յանձն են : Այսպէս զՅուդայէ զորմէ ասէ աւետարանն՝ թէ « Գող էր և զարկըն ինքն ունէր , և որ ինչ անկանէր՝ նա կրէր » , ասէ Նզնիկ . « Եթէ չէր թողացուցեալ (Աստուծոյ) և՛ սատանայի որ գրգռէրն , և՛ Յուդայի որ վասն կծծութեանն եկն յայն , ոչ իշխէր մատնել զնա » :

Ի մեկնութիւնսն Ոսկերերանի ուրեք (Մեկն. Մտթ. հոռ. Գ. էջ 179) ընթեռնումք . « Մի սուրբ բերանք քրիստոնէից զաղակզի և զկծծի բանս խօսեսցին » : Յունարէնն փոխանակ կծծւոյն ունի ἀισχυρός , որ նշանակէ անարդ միանգամայն ագահ : Թարգմանիչն , հմուտ երկոցունց լեզուաց , ընտրէ զկծծին որ մարթի նշանակել և դժուծ , զի է , որպէս թուի մեզ , ի նմին արմատոյ : Եւ այլուր (Յնգ. էջ 196) , Ոսկերեան յանդիմանելով զկին որ գնէ խտրութիւն ի մէջ բն-

չից իւրոց և առնն , ասէ . « Զինչ խօսիս , ո՛վ կին դու այլանդակ , . . . մի մարդ , մի շունչ եղէք երկոքին , և տալաւին ասես . Սա իմ , սա քո : Անէ՛ծք այնպիսի կծծի բանից որ ի սատանայէ բղխիցեն : » Թարգմանիչն դնէ կծծի , կծծի և ագահ մտաց համարելով զայնպիսի խտրութիւն , թէպէտ բնագիրն է այլադգ :

Զայր ագահ մարթ է կոչել ի մերում լեզուի ընչաքաղց , արծաթասէր : Ամենայն ագահ է արդարեւ ընչաքաղց և արծաթասէր , այլ ոչ ամենայն ընչաքաղց և արծաթասէր՝ ագահ : Ընչաքաղցն ոչ յագի ի մեծութենէ , չասէ շատ որչափ և մեծանայցէ . արծաթսիրութիւն է , որպէս անուռն խի յայտ առնէ , անչափ սէր արծաթոյ : Այլ իմն է և զօչաքաղն , որ ասի զիշխանաց և զգործակալաց որ կեղեքեն զլոս ընդ իւրեանց ձեռամբն եւ , որպէս թէ քաղեն իմն զուիշ նոցա :

Ա. Մ. Գ.

---

## ՀԱՏԱԿՈՏՈՐՔ Ի ՆԱԽՆԵԱՅ

---

### ՍՊԱՆՈՒՄՆ ԳՆԵԼԱՅ

Գնէլս այս , եղբորորդի Արշակայ , թողնորդոյն Տրդատայ , պատանի գեղեցիկ եւ սիրելի յաչս նախարարաց , ամբաստանեալ որպէս թէ միաբանեալ գաղտ ընդ նախարարսն հակառակորդս Արշակայ ջանայր նիւթել ապստամբութիւն ընդդէմ հորեղբոր իւրոյ , զի ինքն , իբրեւ արշակունի , թագաւորեսցէ փոխանակ նորա , սպանաւ ի նմանէ դառով : Նկարագիր այսր սպանման , որ է մին յողորմ դիպաց պատմութեան մերոյ , է արդարեւ ի բազում գեղեցիկ մասանց զրոցն բուզանդայ գեղեցկագոյնն : Ունի զծեւ եւ զօրինակ վիպասանութեան մանաւանդ քան պատմութեան . ուստի եւ չիք տարակոյս թէ հաճոյ թուեսցի ընթերցանելաց ողջ բովանդակ տեսանել աստ զնկարագիրն : Առ երկարութեանն առցուք սակայն զվի մասն միայն զայս նուագ , զմնացեալն թողեալ այլում նուագի :

« Զայնու ժամանակաւ էր դուստր մի Անդովկայ ուրումն նահապետին Սիւնեաց , որում անուռն փառաւձեւմ կոչէր , որ կարի անուանեալ էր գեղեցկութեամբ և սլարկեշտութեամբ : Գնէլ սլառանեակն , եղբորորդի արքային էառ զնա ի կնու-



Թիւն իւր: Համբաւ գեղեցկութեան աղջկանն ընդ վայրսն տարածեցաւ, և միւս եւս հօրեղբօրորդի Գնեւոյ որում աւնուն Տիրիթ կոչէր՝ անկանէր ի գաղտագողօնս, զի զնուն իւր տեսանել կարասցէ. և յորժամ եհաս տեսեանն որում ցանկայր, այնուհետեւ հնարս խնդրէր առն կնոջն կորստեան թէ ո՞ր գիտէ՝ զկնի նորա նմա հնար լիցի յափշտակել:

Ապա Տիրիթն ի հնարս նենգութեան մտանէր, և բազում վարձէր իւր օգնականս և սատարս, որովք զիւր չարախօսութիւնն յառաջ վարել կարասցէ: Եւ քսիս ստութեան զԳնեւոյն նենգութեամբ առ թագաւորն Արշակ մատուցանէր՝ թէ ‘Գնէլ թագաւորել կամի, և զքեզ սպանանել: Եւ ամենայն մեծամեծք և նախարարք և ազատք սիրեն զԳնէլ, և ամենայն աշխարհիս մարդիկ կամին զտէրութիւն նորա ի վերայ իւրեանց առաւել քան զքո՝ արդ, գիտեա և տես, արքայ, զինչ գործեսցես, զիարդ մարթասցիս ապրել:’ Եւ այսպիսի բանիւք զրգուէին զթագաւորն Արշակ, մինչև հաստատէին ի միտս թագաւորին զիւրեանց ասացեալսն:

Ապա ռխացեալ թագաւորն ընդ պատանեկին Գնեւոյ, բազում անգամ հալածական առնէր զնա, և նիւթեալ լինէր նենգութիւն բազում ժամանակս: Ապա զնաւասարդաց ժամանակօքն առնէր խորհուրդ թագաւորն Արշակ կոչել առ ինքն զպատանեակն Գնէլ և սպանանել: Առաքէր զՎարդան զեղբայր սպարապետին, զնահապետ ազգին Մամիկոնեան տոհմին, զի մեծաւ երդմամբ և նենգութեամբ կոչել կարասցէ, զի մի խորհուրդն յայտնեսցի, գուցէ փախիցէ և ապրիցի. այլ զի սպտորանօք և հրապուրանօք ածիցէ մինչև ի տեղին մահուն: Եւ էր բանակ թագաւորին ի Շահապիւ վանի, ի բուն բանակի տեղսն Արշակունեացն: Եկն եգիտ Վարդան զպատանեակն Գնէլ ի մօտաւոր տեղոջն, այսինքն ի գեւղն Առաւիւտոց անուանեալ: Մեծաւ ուխտիւ և բազում պատրանօք զպատանեակն Գնէլ հանդերձ իւրով կնաւն և դրամքն հաւանեցուցանէր երթալ հասանել ի բանակն արքունի. իրբեւ այն թէ ի մեծարանս ինչ զնա կոչիցէ թագաւորն, բազում խնդանօք տարեալ հասուցանէր: ‘Թագաւորն Արշակ,’ ասէ, ‘ոչ կամեցաւ զտօնս նաւասարդաց առանց

քո անցուցանել, զի հաճեալ և քաղցրացեալ է ընդ քեզ . վասն զի ըստ բանից չարախօսացն ոչինչ գտաւ ի քեզ չարութիւն , և եհաւ ինքն ի վերայ , զի զուր ցայժմ ատէր զքեզ որ ի նմանէն մեծ սիրոյ արժանի ես :

Ապա չուեաց ամենայն կազմութեամբն իւրով Գնէլ , և երթեալ հասանէր ի բանակն արքունի զգիշերն ամենայն բազում փութով տաքնապաւ , վասն զի վաղիւն , հասելոյ առաւօտուն օրն , լուսանայր կիւրակէն : Նւ յայնմ աւուր տօն հանդիպեցաւ յիշատակի մեծին Յովնանու , որ ի Գրիգորէ և ի Տրդատայ յաւանին Բաղաւանին կարգեալ էր : Յայն յիշատակ աշխարհաբնակք մարդկան ժողովեալ էին , և բազում եպիսկոպոսք յայլոց գաւառաց . և մեծ եպիսկոպոսապետն Ներսէս փոխանակ իւր յղեաց զիւր աթոռակիցն զԽաչ , և զիւր արքիդիակոնն որում անուն Մուրիկ կոչէր , զի երթիցեն նոքա , պէտք զինչ և իցեն ժողովոյն՝ ընդ նորա վճարեացեն . և ինքն անդէն մնաց յարքունական բանակին , զի զնոյն հաղորդութիւնն և անդ կատարեացէ : Նւ յայնմ գիշերի ցայգապալատօն մեծ եղեւ ի բանակին առ Կաթողիկոսին » :

(Մատոռացի յատալ)

## ԱՐՏԱՍՈՒՔ ՊԱՒԴՈՍԻ

Հատուածս որ զկնի՝ ի հին թարգմանութենէ անտի գործոց Ոսկերբն . րանի է : Չէ արդարեւ , եթէ հայեսցուր ի նիւթն , ըստ ճաշակի մեծի մասին ընթերցանելեաց , զի խրատ հոգեւոր է . ակն ունիմք սակայն թէ չլինիցի անախորժ բազմաց վասն յատակն ընտրութեան հայերէն լեզուին , զի է ընտիր թարգմանութիւն նախնեաց հինգերորդ դարուն : Հայրապետն Բանիբուն յորդորէ զունկնդիրս իւր նմանող լինել առաքելոյն Պաւղոսի , որպէս էր ինքն , յիշել զկապանս , զբանդ եւ զարտասուս նորա , ի փորձութիւնս եւ ի նեղութիւնս , զի , ըստ բարեպաշտ մտաց Հայրապետին , այնու դիւրին իմն լինելոց էր հաւատացելոյն ի բաց կալ յաշխարհական ի վնասակար իրաց : Ողջոյն հատուածն գեղեցիկ է . այլ զարմանալի է մանաւանդ նկարագիրն դիմաց կուսի , ընդ որում կշռեալ զարտասուալից դէմնն մեծի առաքելոյն՝ ցուցանէ զսորայն առաւել չքնաղ եւ յափշտակիչ քան զնորայն :

«Մի տրտմեսցուք ընդ նեղութիւնս ինչ որ վասն Գրիգորոսի իցեն , այլ յուշ լիցին մեզ կապանքն Պաւղոսի , և նոյն

եղիցի մեզ յորդորիչ : Եթէ խրատիցես զմեծատունն առնել ողորմութիւնս աղքատաց , յուչ արասջիր նմա զկապանսն Պաւղոսի . ասասջիր . Յիշեա զկապանս նորա , և տեսցես , զի անպատեհութիւն է նմա այնչափ ի վիշտս կալ , և քեզ այդչափ փափկանալ : Յանկանայցե՞ս դրգութեան , զմտաւածջիր դեանդն Պաւղոսի , զի նորին աշակերտ ես և նորին զինուորակից . զիմորդ ի դէպ իցէ զզինուորակիցն ի կապանս տեսանել և զանձն ի գրգութեան : Նեղութիւն ինչ ի վերայ հասանիցէ , և կարծիցե՞ս եթէ թողու Աստուած զքեզ ի ձեռաց , առաջի աչացդ նկարեա զկապանսն Պաւղոսի , և տեսանիցես թէ ի նեղութեան լինել չէ ի ձեռաց թողոյ նշանակ : Եւ յորժամ ի միտ անկանիցի կերպաս հանդերձ զգե՞նուլ , յիշեսջիր զկապանսն Պաւղոսի , և քան զկապերտ ընդ գայռ եկեալ՝ անարգագոյն թուեսցի քեզ այն : Ամիցի՞ս ոսկի զարդս կրել յանձին , զմտաւածջիր զկապանսն Պաւղոսի , և քան զչուան ինչ հին չթուիցի քեզ լաւագոյն : Ամիցի՞ս ծամս գործել և գեղեցիկ երեւել , նկարեսջիր զերկաթն Պաւղոսի ի բանդին , և խանդաղատեսցին միտքդ քո յայն գեղ , և զքո պճնանսն գարշելի համարեսցիս , և դառնապէս հաշիցես հառաչիցես նորա կապանացն : Ամիցիս սընգոյր և ծարիր յաչս և յայտս նկարել , և այլ ինչ նոյնալիսիս , զմտաւածջիր զարտասուս նորա . ‘ Զերկեամ մի , ասէ , զցայգ և զցերեկ ոչ դադարեցի արտասուօք խրատել և ուսուցանել , այսպիսի զարգու զարգարեա զայտադ . իբրեւ զմարգարիտս հեղուցուս զերեսօքդ զարտասուս , և այն իցէ որ սուաւել գեղեցկագոյն զայտադ առնիցէ : Հրամայեցե՞ր կապել զծառայն , զայրացա՞ր , բարկացա՞ր , յիշեա զկապանսն Պաւղոսի , և վաղվաղակի ցածուցանիլցես զբարկութիւնն . զմտաւածջիր զի ի կապելոցն եմք մեք , և ոչ ի կապելեացն . ի սրտաբախացն , և ոչ ի նոցանէ որ զսիրտն բեկանիցեն : Յայրատեցա՞ր , քրքջեցե՞ր մեծամեծս , ի միտ առ զնորա լալն և զհեծելն , և եւս զուարթագոյն զքեզ արտասուքն ցուցանիցեն : Տեսանիցե՞ս զխաղս և զխնջոյս այլոց , զկարաւս և զկիտութիւնս , յիշեսջիր զնորա արտասուսն : Ո՞ր աղբիւրք այնպէս յորդաբուղլս բղխեսցեն , որպէս նորա

աչքն բղխէին զարտասուան : Զոր աղբիւրս կռիցես արտասու-  
ուացն նորա . միթէ զսոյն որ ի դարձտէն ելանէր և արբու-  
ցանէր զամենայն երկիր . այլ չասեմ այնմ հանգոյն . քանզի  
սորա արտասուացն աղբիւր զոգիս ոռոգանէր , և ոչ գեր-  
կիր : Եթէ ոք զՊաւլոս արտասուօքն և յոգւոցն հանելով  
ցուցանէր , չէր քան զնա գեղեցիկ տեսանել ըւերուց բիւրս  
կաքաւչաց զուարճալից սլակեալս : Նա զի՞նչ տեսմ , եթէ  
ոք ի Թատերացն և ի կրսակաց յանկարծ յախշտակէր զոք  
երիտասարդ ի գեղխեւոցն , մոլեգնեալ կտղեալ ի մարմնոյ  
ցանկութիւնս , և ածէր կացուցանէր աղջիկ մի կոյս նմին  
համեմատ , ի նոյն տիս , ի նմին հասակի , նա որ անցուցա-  
նէր զանցուցանէր եւս զնովաւ գեղով և հասակաւ . աչս  
Ժաւիս , յօնս միակիցս , բիրս խարտեալս , մեղմս , քաղցրա-  
հայեացս , ցածունս , հանդարտագոյնս . ի նստել ցածուն ,  
յառնել զգաստապեալ , համեմատագոյն , լի ամենայն շնոր-  
հօք . արտեւանունս Թոյրաթուխս , ներքոյ և արտաքոյ ան-  
տառախիտս մացառածեւս զբօքն սլակեալ , որպէս Թէ  
շունչ ինչ և հոգի ի բիւսն կայցէ . ճակատն սաղաթուն ,  
սցտքն ի ներքոյ միահարթք , երկայնածնօտք , յլկեալք  
մարմարածեւք . կլաին բոլոր , ունչք պարզք , շրթունք հա-  
սարակ , առամունք սպիտակք , ամենեւին գեղեցիկ , ամե-  
նեւին վայելուչ . ապա և զՊաւլոս ոք ածէր արտասուօքն  
հանդէս նմին կացուցանէր , Թուի ինձ Թէ և կարի ոք  
սլակչոտեալ երիտասարդն էր , Թողոյր զայնչափ գեղեցիկ ե-  
րես , և ի սա դառնայր . քանզի առաւել լուսաւորութիւն  
ի սորա աչացն արձակէր , զի սա հոգեւոր և շնորհալից է .  
այն գեղ զերիտասարդաց միտս շրջէ և սրտրէ և այրէ իբրև  
ի կրակի , և սա նմին հակառակ ցածուցանէ և զովացուցա-  
նէ , նա և զանդամանդեայն եւս զմիտս կարող է կակղա-  
ցուցանել : (Ոսկ. Առ. Կողոս. Խ. ԺԲ.) :





## Մ Խ Ի Թ Ա Ր Ո Ւ Թ Ի Ի Ն



Յորժամ Աստուած որ եհար զիս՝ ածեալ ի գուժ յարտասուս իմ՝  
Զիւր ձեռն ի բաց դոյզն ինչ բառնայ յընկճեալ սրտէ տառապելոյս ,  
Եւ սակաւ արարեալ դիւր երկայնածիճ յուզից իմոց՝  
Թոյլ տայ աչացքս ցամաքել եւ կըլանել լանջացս ողի .

Առժամայն , որպէս զալիս որ յեզերաց մըղեալ յետս՝  
Անդրէն դառնայ մօրնչելով անդըր յափուսն ընդ որ բեկաւ ,  
Կամ իբրեւ գրոյս ինչ եղեգան , սին խաղալիկ փոթորկի ,  
Որ կորանայ եւ կանգնի անդ ընդ ձեռամբ անցաւորին ,

Ե՛ւրս հլու եւ խանդակամ դառնայ սիրտ իմ առ Աստուած ,  
Եւ դարձուցեալ ի մոռացոնս իւրոց պատժոցն ըզյիշատակ ,  
Որպէս մանուկ որ խոնարհ , չիշխէ առնել լու ինչ նըմա  
Բայց մըրմունջ մի գորովալից առ տըրտընջել եւ օրհնել :

Քանի՛ սուգ հոգւոյ իմոյ էր վըշտագին եւ թախծալից ,  
Քանի՛ անքուն անցին գիշերք , եւ տիւք քանի՛ք աննըշոյլ .  
Քանի՛ցս անդ ի մըթի թըւէի զքայլս ժամանակին ,  
Մինչ անցեալ սահէին ժամք առանց ըզրուն ածելոյ :

Այլ ի բա՛ց յինէն աւուրբդ , անկցի՛ն ի սպառ ի մոռացումն .  
Որ ինչ ոչ եւս է վասն ուրուք՝ իցէ՞ ասել զի էր երբեք .  
Կորեան աւուրք ինչ յաւուրց , այլ տակաւին երանութիւն  
Կարէ փըթթել աչաց իմոց որպէս ծաղիկ մամարայնոյ :

ՔՈ են աւուրք ամենայն , զի՞ փոյթ զնոցին քեզ համարոյ .  
Ժամանակն ի քո հրաման վարի յառաջ կամ դառնայ յետս .  
Աղէ՛ , միթէ չիցե՞ս դու ԱՅՆ որ յետս անդրէն դարձուցեր  
Զըստուեր լիոյ ժամացուցի քեւ փրկելոյ արքային<sup>(1)</sup> :

Այսպէս եթէ էին քո կամք , այսօր իսկ ուխ կենաց իմոց  
Խաղացեալ վաղվադակի անդրէն անջան յիւր աղբերակն՝  
Ըզմանկուծիւն իմ թառամեալ սընուցանէր միւսանգամ ,  
Եւ շառագոյն ալեօք իւրովք ածէր զափուսս իւր յարգասիս .

(1) Առաջին Եղեկեա , որ հեռանդացեալ Տէր է Դոհ՝ պաղատէր առ Աստուած եւ  
Ենդրէր արդարաւոր է նմանէ Էլեան . Ե քրացաւ Տէր է Դոհ , Ե յաւել յառաքաւ Զորաւու  
հեգեթաւուն : Եւ է նշան գրքաւիտան Եղեկեայ՝ դառնալը արտաբերան ուղղելն յետս զդառն  
ապրիմանին Առաջաւ :

Հերացս ալիբ , որ հազիւ իմն , եղո՛ւկ , ներկեն արծաթագոյն  
Զայս ճակատ յորում դրոշմեալ է աղետից զանցս անցելոց ,  
Լինէին դեռ հովանի նմա յիւրեանց խըրժունս եքենեայս՝  
Առնել պայծառ իբրեւ զալիս ընդ որ էանց կարապ թըռչուն .

Անդրէն զշողին բըբաց իմոց արծարծանել կարէր սէր ,  
Եւ հընոց հըրոյ սըրտիս , բոցաճաճանչ շողեալ յաչս իմ ,  
Արձակել զօրէր կըրկին ըզկայծակունս սըրբութեան ,  
Յորոց շիկնի գեղեցկութիւն երկիւղած իմըն տենչանօք :

Թոյլ տուր ինձ քաղել , Աստուած , զարմաւենիս զայս պըտղաբեր ,  
Եւ կըրել յաւիտեան ըզնա ի ծոց իմ բերկրալից ,  
Զոր օրինակ հեղեղ ջըրոց որ վարիցէ յալիս իւր  
ԸզՍարոնի վարդից տերեւս որ ըզնորին խընկեն զընծացս :

Ե՛րբ իցէ՝ զի տեսից զնա յանդորրութեան անդ զիշերոյ  
Խոնարհեալ հանդարտիկ ի մանուկ իւր որ նընջիցէ .  
Ե՛րբ տեսից գորդիս նորա՝ զի վարդագոյն շըրթամբք իւրեանց  
Կախեալ կացցեն զըստեանց նորին որսլէս մեղուք ըզշուշանաց :

Ընդ հովանեաւ թըզենւոյ , առ հոսանօք ջուրց վըտակի ,  
Ի բաց յաչաց նախանձօտին , հեռի՛ շաւղաց ամպարըշտին ,  
Շինեցից բոյն յաշխարհի աստ վասըն նոցին բնակութեան՝  
Նըմանեալ ծիծուան ծովու որ ըզբոյն իւր զընէ ի խումս :

Անդ չարբուցից ես ըզնոսա ի դառնահամ աղբերց անտի  
Յոր խառնեալ է ըզթոյն իւր իմաստութիւն մարդկեղէն .  
Այլ , զի կացից հաւատարիմ ի պատուիրանս հարց իմոց ,  
Իբրեւ զմիակ իմաստութիւն ուսցին յինէն զանուն քո , տէր :

Անդ թողից ես նոցա զայն անպաճոյճ ժառանգութիւն  
Զոր ի զարմման շնորհէ Աստուած ձագուց թըռչնոց փոքրբկանց ,  
Զականակիտ ջուր վըտակի , բոյն մի շինեալ ընդ տերեւովք ,  
Միրգս ի ծառոց ինչ թօթափեալս , եւ գտեղին իմ յարեւու :

Յայնժամ , իբրեւ զհինօրեայ տունկ ձիթենւոյ յիւր ի բողբոջս ,  
Խանրասցի ճակատն իմ ի պըսակաց թարշամելոց ,  
Եւ տեսից ես ըզբարեփառ ամաց զիմոց որդեկաց  
Ըզծածկել շուրջ զիմ բուն խամրեալ ընդ դեռաբոյս ծըղովք իւրեանց :

Յայնժամ երգեցից ես զալեաց իմոց զերգս օրհնութեան ,  
Եւ , իբր արբեալ կոչնական սուրբ ըմպելեօք բարութեանց քոց ,  
Տաց ըզբաժակն ի ծեռս որոց իցեն յաստիս մանկութեան ,  
Եւ նընջեցից ես քաղցր ի բուն յերանութեան անդ իմում :

## ԱՌԱՆՁԻՆՆ ԲԱՆՔ

### ՀԱՅԵՐԻՆ ԼԵԶՈՒԻ

#### Ա

ՅԱՄԻ ԵՒՍ . Կարէի Դ . Եկա՛ր Կարէ : \* Կերիցես այս ամ  
զսերմանեալդ , և յամէ ևս կերիցես զմնացորդսն : — \* Թե-  
րեւս արասցէ պտուղ (թզենին) . ապա թէ ոչ՝ յամէ ևս հատ-  
ցես զդա :

ԱՄ ՅԱՄԻ , ԱՄ ԸՍՏ ԱՄԻ , ԱՄ ԶԱՄԻ ԶԿՆԻ , ԱՄԻ ԱՄԻ .  
Կարուէ Կարէ . Կա՛ն Կարէ : \* Կարգեցին ամ յամէ զօրն զայն՝  
տօն տարեկանաց : — Տասանորդեսցես ամ ըստ ամէ : — \* Ե-  
ղեւ սով յաւուրս Դաւթի զերիս ամս՝ ամ զամի գինի : — \* Եր-  
թային ծնողքն նորա ամի ամի յերուսաղէմ ի տօն զատկին :  
— \* Ամի ամի ծառայեսց քեզ :

ԱՄԲԱՌԱՆԱԼ ԶԳԼՈՒԻ . Զլա՛ն զերցնէլ . ապարա՛քիլ : \* Ոչ ևս  
յաւելին ամբառնալ զգլուխս իւրեանց :

ԱՄԲԱՍՏԱՆ ԼԻՆԵԼ . Կա՛ն Կարէ : \* Եթէ զքէն  
ամբաստան լիցին դռքա : — \* Մի՛ ոք ի խեսցէ ամբաստան  
լինել վասն դորա : — \* Ամբաստան լինի Աստուծոյ զխարայել :  
— \* Ամբաստան լինէին զնմանէ ընկերքն իւր առ Անտիոքոս :

ԱՄԲՈՒ ԱՌԱՆԵԼ . Կարէ Կարէլ իւրա՛ն Կարէ : \* Առեալ  
արս ոմանս գռեհիկս անօրէնս՝ ամբոխ արարեալ խռովեցին  
զքաղաքն :

ԸՆԴ ԱՄԵՆԱՅՆ . Են շար . շար շար . Կա՛ն Կարէ : \* Ընդ  
ամենայն թէ քաջ իցեն քանքարք արծաթոյն չորքհարկւր :  
— \* Ընդ ամենայն՝ ոգիք չորք հաղարք : — \* Սատակեցաւ  
մանուկն , որդի կայսերն , և ընդ ամենայն՝ այն ժառանգ  
գտանէր նմա :

ԱՄԹ ԶԱՄԱՐԵԼ . Կա՛ն Կարէ : \* Զի որ ոք ամօթ համա-  
րեսցի զիս և զբանս իմ : — \* Ապա թէ ոք ամօթ համարեսցի  
վասն կուսին իւրոյ՝ եթէ իցէ ելեալ ըստ չափ :

ՅԱՄԹ ԱՌԱՆԵԼ , ԸՆԴ ԱՄԹ ԶԱՐԿԱՆԵԼ . Կա՛ն Կարէ . Կարէ  
Են : \* Զյիմարս աշխարհիս ընարեաց Աստուած , զի յամօթ

արասցէ զիմաստունս : — Զխորհուրդ աղքատի յամօթ արարին : — Զմիւսն ընդ ամօթ հարեալ կորացուցանէ :

ՅԱՄԹԹ ԼԻՆԵԼ, ՅԱՄԹԹԻ ՀԱՐԿԱՆԻՄ, ԱՄԹԹՈՎ ԿԱԼ. ԽԻՆԼ. Խաղ՝ ԸԼԼԸ: \*Մի՛ յամօթ եղէց զի յուսացայ ի քեզ: — \*Յամօթ լինէին ամենեքին որ հակառակն կային նմա: — \*Չահի զամօթի հարեալ անկաւ ի վերայ երեսաց իւրոց: — \*Թէպէտ և թագաւորն թողութիւն պատժոց առնիցէ, սակայն ցանկ ամօթով կայցէ (յանցաւորն):

ՀԵՂ ԱՅԳ, ՀԵՂ ԱՅԳՍ ԱՅԳՈՒՆ. 000 թու 000 Հ 000 99 թու 00. 000 թու 000 Հ 000 99 թու 00

Հասցե : \* Ընդ. այգ ընդ առաւօտն յարուցեալ ել և գնաց  
 յանապատ տեղի: — Ընդ այգս այգուն եկին հասին:

ԱՅԳՈՒՆ ԱՅԳՈՒՆ . 000 Քառ 000 խա 0 պր 1 րո . 000 մհն 000 խա 0 պր : \*Վաղէին  
այգուն այգուն իւրաքանչիւր ըստ բաւականի իւրում: —  
\*ՁԼ՞ է զի այգւսէս ծիրիւս, որդի արքայի, այգուն այգուն,  
և ոչ պատմես ինձ :

ՅԱԹԻՌՈՒՄ՝ ՅԱՅԹԻՌՈՒ ԿԱԼ. — նոյն է ՅԱԿԶԻՌՈՍ ԿԱԼ. —  
 որդին հայտնաբերած զբայ կեցած ականջ դնել. Դրել էլել ուշադրա-  
 լեամբ. հիանալ: \*Յորժամ ծննդայքն և տալիղքն բարբառեա-  
 ցին, առաւել ևս յաթիւս և յակճիւս կան ընկճեալք: —  
 \*Յայթիւ և ի թռիչս կայցէ ի բնակութեանն:

ԱՌ ԱՅԺՄ. Հիմալայ հիմա: \*Դու առ այժմ երթ, և յորժամ ժամ լինիցի, կոչեցից զքեզ: — \*Առ այժմ աստ հանդուսցուք զբանս:

ԱՅՈՒ ԸՆԴԻ ԱՅՈՒԼՈՅ . Բռն ղը ուրիշ բանի գեղ . Կարբեր . ուրիշ :  
 \*Թերեւս առ աշօք ինչ համարէին , կամ այլ ընդ այլոյ յա-  
 լուցեալ է երևեալ : — \*Ջսերմն զոր սերմանես , ոչ այլ ընդ  
 այլոյ գայ : — \*Իրեւս արտաքս ելանեմք , այլք ընդ այլոյ  
 լինիմք :

— Կա՛մ, ինչպե՛ս եմք : շնորհ : \*Այն պղտորեալ  
այլ ընդ այլ տեսանէ : — \*Այլ ընդ այլ իրքն երեւէին :  
— \*Անասային իսկ ոչ, և այլ ընդ այլ մեկնելոյ էին :

3. 9.

ԻՆԱՄԱԿԱԼՔ ՀԱՆԴԻՍԻՍ  
Յ. ԳՈՒՐԳԷՆ Ա. Մ. ԳԱՐԱԳԱՇԵԱՆ